Հավելված

Շրջանակային համաձայնագրով գնում կատարելու հրավեր

## Հարգելի գործընկեր

ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի Ն/Դ ուսումնական հաստատության 2015թ-ի կարիքների համար առաջացել է «ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ -11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում սննդամթերքի ձեռք բերման անհրաժեշտություն:

Ապրանքների մատակարարման պայմանները սահմանված են կից ներկայացվող պայմանագրի նախագծով:

Պեմզաշենի Ն/Դ ուսումնական հաստատության կողմից կազմակերպված ընթացակարգի ծածկագիրն է ՇՄՊՆ/ԴՈՒՀ- ՇՀԱՊՁԲ - 11/2:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի գյուղապետարան, N 1 սենյակ, Էմմա Յայլոյանին, մինչև 2015թ. փետրվարի 23–ը, ժամը 14:00-ը:

Հայտերը կբացվեն, Պեմզաշենի գյուղապետարանի շենքում, Շիրակի մարզ, գ. Պեմզաշեն համայնք, N 1 սենյակում, 2014թ. փետրվարի 23 –ին, ժամը 14:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ -11/2» ծածկագրով: ընթացակարգի հրավերով սահմանված կարգին համապատասխան:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Հարգանքով՝

Գնման ընթացակարգի քարտուղար

Էմմա Յայլոյան

Հավելված 1

<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ – 11/2>>ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ՇՄՊՆ/ԴՈՒՀ- ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով

մրցութային հանձնաժողովին

## Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն   Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր

*Սննդամթերքի*

| N | *Անվանումը* | *Տեխնիկական բնութագիրը* | *չ/մ* |
|---|---|---|---|
| *1* | հաց | Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % | կգ |
| *2* | ալյուր ցորենի | Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.75%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 30,0%: ՀՍՏ 280-2007: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 3 | պանիր | Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջ-ների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 4 | կարագ | Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով: Անվտանգությունը և | կգ |

| | | | |
|---|---|---|---|
| | | մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված | |
| 5 | յոգուրտ | Յոգուրտ (բիո) կենդանական պատրաստված կաթնամթերքից, մրգային, առանց կոնսերվանտների | հատ |
| 6 | ձու | Ձու սեղանի կամ դիետիկ, 1-ին կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | հատ |
| 7 | խտացրած կաթ | Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 0 T-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | տուփ |
| 8 | թթվասեր | Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0T, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % | կգ |
| 9 | կաթնաշոռ | Կաթնաշոռ անյուղ, թթվայնությունը՝ 210-240 ° T, փաթեթավորված սպառողական տարաներով, 200-500 գ տուփերով, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | Տավարի միս | Միս տավարի պաղեցրած, փափուկ միս առանց ոսկորի, զարգացած մկաններով, պահված 0 ◦C -ից մինչև 4 ◦C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 0 % և 100 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 11 | Հավի միս | Բրոյլեռ տիպի, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 12 | Տավարի աղացած միս | Տավարի աղացած միս թարմ կամ սառեցված, առաջին պարարտության: Հերմետիկ փակ տարայով, բարձր տեսակի:Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 13 | Ձկան միս | Թարմ ամբողջական 0.7-ից մինչև 1 կգ զանգվածով, առանց կողմնակի հոտերի հայկական ծագման սև իշխան: | կգ |
| 14 | Ձեթ(բուսական յուղ) | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր և I տեսակների, չզտված, չհոտազերծված: Անվտանուգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենգքի 8-րդ հոդվածի: | լիտր |
| 15 | խնձոր | Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ |
| 16 | բանան | Բանան թարմ, պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63 մմ ներառյալ): Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ |

| | | | |
|---|---|---|---|
| 17 | նարինջ | Նարինջ թարմ, պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63մմ ներառյալ): Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 18 | մակարոն | Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ А (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), В (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 19 | բրինձ | Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ |
| 20 | հնդկաձավար | Գրեչկա I տեսակի, խոնավությունը՝ 14%-ից ոչ ավելի, հատիկները՝ 97.5%-ից ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, ԳՕՍՏ 5550-74 | կգ |
| 21 | ոլոռ | Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 22 | ոսպ | Երեք տեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 23 | ցորենաձավար | Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, «Հացահատիկին, դրա | կգ |

| | | | |
|---|---|---|---|
| | | արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | |
| 24 | սիսեռ | Սիսեռ ԳՕՍՏ 8758-76, համասեռ, մաքուր, չոր խոնավությունը՝ (14,0-20,0) % ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 25 | կարտոֆիլ | Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90%-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 26 | կաղամբ | (ԳՈՍՏ 26768-85) 55% - վաղահաս, 45% - միջահաս: Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկված: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, ցրտահարված գլուխների մթերումը չի թույլատրվում: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս -0.7կգ: | կգ |
| 27 | սոխ | Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 28 | գազար | Սովարական և ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 29 | տոմատի մածուկ | Բարձր կամ առաջին տեսակների, ապակե կամ մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ$^3$ տարողությամբ: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01- | կգ |

| | | | |
|---|---|---|---|
| | | 2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | |
| 30 | վարունգ | Վարունգ թարմ, օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | կգ |
| 31 | լոլիկ | Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | կգ |
| 32 | կանաչի խառը | Կանաչի տարբեր տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | կապ |
| 33 | ճակնդեղ | Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%: | կգ |
| 34 | Շոկոլադ | Ըստ սահմանված բնութագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 35 | կարամել | Կարամել կաթնային, պոմադային, մրգային, ընկուզային, ընկուզամրգային, նշակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով: Կախված կոնֆետի տեսակից խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ նրբաթիթեղի և թղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 36 | Հալվա | Արևածաղկի միջուկ -53.8%, սպիտակ շաքար, օսլայի օշարակ, փշաթերթիկի արմատի հանուկ, անուշաբույր վանիլին: Էներգետիկական արժեքը (կալորիականությունը) 100գ մթերքին 515.0 կկալ/2156.0կՋ: Սննդային արժեքը 100գ մթերքի՝ –սպիտակուցներ՝ 12.4գ, ճարպեր՝ 32.7գ, ածխաջրեր՝ 44.7գ: Անվտանգությունը՝ | կգ |

| | | | |
|---|---|---|---|
| | | ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, արտասահմանյան արտադրության, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80%: | |
| 37 | թխվածքաբլիթ | Գեղարվեստական ձևավորմամբ, փխրուն կամ բիսկվիթային թխվածք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, արտասահմանյան արտադրության, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80%: | կգ |
| 38 | շաքարավազ | Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 39 | Աղ կերակրի | Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: | կգ |
| 40 | Թեյ | Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: «Փունջ», բարձրորակ և I տեսակների: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | տուփ |
| 41 | Աղացած պղպեղ կարմիր | Միջին կամ թույլ կծվածությամբ համեմունք աղացած, խոնավության զանգվածային մասը՝ 10%-ից ոչ ավելի, մոխրի առկայությունը՝ 9%-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ չափածրարված 0.015 կգ-ից մինչև 5 պոլիէթիլենային տոպրակներում, ԳՕՍՏ 29053-91: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ |
| 42 | Խմորիչ | Չոր, գործարանային փաթեթավորված, չափածրարված, խոնավությունը՝ 8 %-ից ոչ ավելի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8- | կգ |

| | | | |
|---|---|---|---|
| | | րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 80 % | |
| 43 | Կակաո | Սննդային արժեքը 100գ մթերքի` –սպիտակուցներ` 27.3գ, ճարպեր` 10գ, ածխաջրեր` 12.2գ, վիտամիններ PT` 1.8մգ, վիտամին B1` 0.1մգ, վիտամին B2` 0.2մգ, նատրիլ` 13մգ, կալիում` 150մգ, կալցիում` 128մգ, մագնեզիում` 425մգ, ֆոսֆոր` 650մգ.: Էներգետիկական արժեքը (կալորիականությունը) 100գ մթերքին 289 կկալ: Անվտանգությունը` ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը` «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, արտասահմանյան արտադրության, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80%: | կգ |
| 44 | Հյութ մրգերի | Մրգահյութեր` պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ` նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ` 0,8% ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը` ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված «Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի», «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | լիտր |
| 45 | Ջեմ | Ջեմ` տարբեր մրգերի, 1-ին տեսակի: Անվտանգությունը` ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը` «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ |

Գնորդ

ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի Ն/Դ ուսումնական հաստատություն

Բանկ- << ԱՇԻԲ>>

Հ/Հ 900202224029

ՀՎՀՀ 06107385

Պեմզաշենի Ն/Դ հիմնարկի տնօրեն Մ. Ամիրաղյան

Մատակարար

---------------------------------------

---------------------------------------

---------------------------------------

---------------------------------------

---------------------------------------

Հավելված 3

<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ – 11/2>> ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ՇՄՊՆ/ԴՈՒՀ- ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով

մրցութային հանձնաժողովին

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | Ապրանքի անվանումը | Ֆինանսական գումարը 2015թ. Պեմզաշենի Ն/Դ հիմնարկի բյուջեի միջոցների հաշվին | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 1 | հաց | 10.3% | 28.9% | 30.4% | 30.4% | 100% |
| 2 | այյուր ցորենի | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 3 | պանիր | 11% | 29% | 29% | 31% | 100% |
| 4 | կարագ | 10% | 29% | 30% | 31% | 100% |
| 5 | յոգուրտ | 10% | 29% | 32% | 29% | 100% |
| 6 | ձու | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 7 | խտացրած կաթ | 10% | 28.4% | 30.8% | 30.8% | 100% |
| 8 | թթվասեր | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 9 | կաթնաշոռ | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 10 | Տավարի միս | 10% | 28% | 31% | 31% | 100% |
| 11 | Հավի միս | 10% | 29% | 29% | 32% | 100% |
| 12 | Տավարի աղացած միս | 10% | 28% | 31% | 31% | 100% |
| 13 | Ձկան միս | 10% | 28% | 31% | 31% | 100% |
| 14 | Ձեթ(բուսական յուղ) | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 15 | խնձոր | 10% | 28% | 31% | 31% | 100% |
| 16 | բանան | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 17 | նարինջ | 33% | - | - | 67% | 100% |
| 18 | մակարոն | 11% | 26% | 30% | 33% | 100% |
| 19 | բրինձ | 11% | 29% | 30% | 30% | 100% |
| 20 | հնդկաձավար | 12% | 33% | 9% | 26% | 100% |
| 21 | ոլոռ | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 22 | ոսպ | 10% | 28% | 31% | 31% | 100% |
| 23 | ցորենաձավար | 12% | 33% | 29% | 26% | 100% |
| 24 | սիսեռ | 10% | 26% | 32% | 32% | 100% |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 25 | կարտոֆիլ | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 26 | կաղամբ | 11% | 29% | 30% | 30% | 100% |
| 27 | սոխ | 10% | 29% | 29% | 32% | 100% |
| 28 | գազար | 10% | 29% | 29% | 32% | 100% |
| 29 | տոմատի մածուկ | 11% | 32% | 32% | 25% | 100% |
| 30 | փարունգ | - | 11% | 89% | - | 100% |
| 31 | լոլիկ | - | 11% | 89% | - | 100% |
| 32 | կանաչի խառը | 13% | 29% | 29% | 29% | 100% |
| 33 | ճակնդեղ | 6% | 34% | 40% | 20% | 00% |
| 34 | Շոկոլադ | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 35 | կարամել | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 36 | Հալվա | 11% | 24% | 34% | 31% | 100% |
| 37 | թխվածքաբլիթ | 10% | 28% | 31% | 31% | 100% |
| 38 | շաքարավազ | 10% | 29% | 30% | 31% | 100% |
| 39 | Աղ կերակրի | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 40 | Թեյ | 7% | 31% | 31% | 31% | 100% |
| 41 | Աղացած պղպեղ կարմիր | 10% | 30% | 29% | 31% | 100% |
| 42 | Խմորիչ | 33% | - | 34% | 33% | 100% |
| 43 | Կակաո | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 44 | Հյութ մրգերի | 10% | 30% | 30% | 30% | 100% |
| 45 | Ջեմ | 10% | 30% | 30% | 30% | 100% |

Գնորդ Մատակարար

ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի Ն/Դ ուսումնական հաստատություն ----------------------------------------

Բանկ- << ԱՇԻԲ>> ----------------------------------------

Հ/Հ 900202224029 ----------------------------------------

ՀՎՀՀ 06107385 ----------------------------------------

Պեմզաշենի Ն/Դ-ի մանկապարտեզի տնօրեն՝ Մ. Ամիրաղյան ----------------------------------------

Հավելված 2

<<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ – 11/2>> ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ՇՄՊՆ/ԴՈՒՀ- ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով

մրցութային հանձնաժողովին

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | Ապրանքի անվանումը | Միավորի գինը | Չափման միավորը | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հաց | դրամ | կգ | 255.0 | 716.0 | 753.0 | 753.0 | 2477.0 |
| 2 | Այլուր ցորենի | դրամ | կգ | 3.0 | 9.0 | 9.0 | 9.0 | 30.0 |
| 3 | պանիր | դրամ | կգ | 2.4 | 6.0 | 6.0 | 6.6 | 21.0 |
| 4 | կարագ | դրամ | կգ | 7.0 | 19.4 | 20.6 | 20.6 | 67.6 |
| 5 | յոգուրտ | դրամ | հատ | 100.0 | 280.0 | 300.0 | 280.0 | 960.0 |
| 6 | ձու | դրամ | հատ | 100.0 | 300.0 | 300.0 | 300.0 | 1000 |
| 7 | խտացրած կաթ | դրամ | տուփ | 49.0 | 140.0 | 151.0 | 151.0 | 491.0 |
| 8 | թթվասեր | դրամ | կգ | 1.6 | 4.8 | 4.8 | 4.8 | 16.0 |
| 9 | կաթնաշոռ | դրամ | կգ | 1.6 | 4.8 | 4.8 | 4.8 | 16.0 |
| 10 | Տավարի միս | դրամ | կգ | 5.0 | 14.0 | 15.0 | 15.0 | 49.0 |
| 11 | Հավի միս | դրամ | կգ | 6.0 | 17.0 | 17.0 | 18.0 | 58.0 |
| 12 | Տավարի աղացած միս | դրամ | կգ | 6.0 | 17.0 | 18.0 | 18.0 | 59.0 |
| 13 | Ձկան միս | դրամ | կգ | 4.0 | 11.2 | 12.0 | 12.0 | 39.2 |
| 14 | Ձեթ(բուսական յուղ) | դրամ | լիտր | 0.3 | 0.9 | 0.9 | 0.9 | 3.0 |
| 15 | խնձոր | դրամ | կգ | 24.0 | 64.0 | 70.0 | 70.0 | 228.0 |
| 16 | բանան | դրամ | կգ | 12.0 | 36.0 | 36.0 | 36.0 | 120.0 |
| 17 | նարինջ | դրամ | կգ | 8.0 | - | - | 16.0 | 24.0 |
| 18 | մակարոն | դրամ | կգ | 3.4 | 8.2 | 9.6 | 10.4 | 31.6 |
| 19 | բրինձ | դրամ | կգ | 6.5 | 18.8 | 19.5 | 19.5 | 64.3 |
| 20 | հնդկաձավար | դրամ | կգ | 4.0 | 11.0 | 12.0 | 12.0 | 39 |
| 21 | ոլոռ | դրամ | կգ | 1.2 | 3.6 | 3.6 | 3.6 | 12.0 |
| 22 | ոսպ | դրամ | կգ | 1.5 | 4.0 | 4.5 | 4.5 | 14.5 |
| 23 | ցորենաձավար | դրամ | կգ | 3.0 | 8.0 | 7.0 | 6.0 | 24.0 |
| 24 | սիսեռ | դրամ | կգ | 1.2 | 3.0 | 3.6 | 3.6 | 11.4 |
| 25 | կարտոֆիլ | դրամ | կգ | 35.0 | 102.0 | 104.0 | 104.0 | 345.0 |
| 26 | կաղամբ | դրամ | կգ | 14.0 | 40.0 | 42.0 | 42.0 | 138.0 |
| 27 | սոխ | դրամ | կգ | 1.3 | 3.9 | 3.9 | 4.2 | 13.3 |
| 28 | գազար | դրամ | կգ | 1.3 | 3.9 | 3.9 | 4.2 | 13.3 |
| 29 | տոմատի մածուկ | դրամ | կգ | 1.5 | 4.5 | 4.5 | 3.5 | 14.0 |
| 30 | վարունգ | դրամ | կգ | - | 5.0 | 37.0 | - | 42.0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 31 | լոլիկ | դրամ | կգ | - | 5.0 | 37.0 | - | 42.0 |
| 32 | կանաչի խառը | դրամ | կապ | 4 | 10 | 10 | 10 | 34 |
| 33 | Ճակնդեղ | դրամ | կգ | 0.3 | 1.6 | 1.0 | 0.9 | 4.7 |
| 34 | Շոկոլադ | դրամ | կգ | 2.0 | 6.0 | 6.0 | 6.0 | 20.0 |
| 35 | կարամել | դրամ | կգ | 2.0 | 6.0 | 6.0 | 6.0 | 20.0 |
| 36 | Հալվա | դրամ | կգ | 1.8 | 4.2 | 6.0 | 5.4 | 17.4 |
| 37 | թխվածքաբլիթ | դրամ | կգ | 2.4 | 6.6 | 7.2 | 7.2 | 23.4 |
| 38 | շաքարավազ | դրամ | կգ | 11.4 | 32.2 | 33.6 | 33.6 | 110.8 |
| 39 | Աղ կերակրի | դրամ | կգ | 1.5 | 4.5 | 4.5 | 4.5 | 15.0 |
| 40 | Թեյ | դրամ | տուփ | 1 | 4 | 4 | 4 | 13 |
| 41 | Աղացած պղպեղ կարմիր | դրամ | կգ | 0.16 | 0.48 | 0.48 | 0.5 | 1.62 |
| 42 | Խմորիչ | դրամ | կգ | 1 | - | 1 | 1 | 3 |
| 43 | Կակաո | դրամ | կգ | 0.1 | 0.3 | 0.3 | 0.3 | 1.0 |
| 44 | Հյութ մրգերի | դրամ | լիտր | 40.0 | 120.0 | 120.0 | 120.0 | 400.0 |
| 45 | Ձեմ | դրամ | կգ | 3.2 | 9.6 | 9.6 | 9.6 | 32.0 |

Գնորդ

Մատակարար

ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի Ն/Դ ուսումնական հաստատություն ------------------------------------------------

Բանկ- << ԱՇԻԲ>> ------------------------------------------------

Հ/Հ 900202224029 ------------------------------------------------

ՀՎՀՀ 06107385 ------------------------------------------------

Պեմզաշեն Ն/Դ հիմնարկի տնօրեն՝ Մ. Ամիրաղյան ------------------------------------------------

Սննդամթերքի գնման պայմանագիր
Ν ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ 11/2
նախագիծ

ք. ___________ «----- »-----------------20-----թ.

Պեմզաշենի Ն/Դ ուս. հաստատություն ի դեմս տնօրեն` Մ. Ամիրաղյանի, որը գործում է ___________ կանոնադրության հիման վրա /այսուհետև` Գնորդ/, մի կողմից, և ________________________________ ի դեմս ընկերության տնօրեն ________________________________ այսուհետև վաճառող/, մյուսկողմից, կնքեցինսույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N1 հավելվածով` Տեխնիկական բնութագրով նախատեսված __սննդամթերքը______/ այսուհետև` Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2.Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի`

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա/ Չընդունել Ապրանքը` իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ/ Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումիցհետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք` սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն` պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծելսույն պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կոմից պայմանագիրը խախտելն էական է համարվում , եթե`

ա/մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որըչի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ/ խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը

3.1.5 Զննել Ապրանքը և հայտանաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է `

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում , ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները ,իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո ` ողջամիտ ժամկետում , երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի`

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո` ողջամիտ ժամկետում այլ անձի ` Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր , սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք` համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարաված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելումիջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված , սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է`

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը` սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող` ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմիցսույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան` պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն , ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու , այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման /կանխավճարի/ ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ______________ /______________________________________/

ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ /պահումներ/ կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող /կանխավճարի մարվող/ գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման – ընդունման արձանագրության հիման վրա՝ N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում/, բայց ոչ ավելի քան նույն հավելվածով վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճաիք

ժամանակացույցով նախատեսված միջոցներըչեն բավարարում, ապա վճարումը սույնկետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողիմիջև հանձնման-ընդունման արձանագրության / այսուհետ՝ արձանագրություն/ ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իրկողմից ստորագրված հանձնման –ընդունման արձանագրության երկու օրինակ / հավելվածN 4/:

6.2 Արձանագրությունը ստորագրվում է եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, հակառակ դեպքեւմ ՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում , արձանագրություն չի ստորագրվում, և պատվիրատուն ՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները

բ/ վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման- ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իրկողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմիցսույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 / զրո ամբողջ հինգ հարյուրերորդական/ տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակակարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 / զրո ամբողջ հինգ տասնորդական/ տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տուժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմիցսույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերնիրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերինչի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուցհետո, և որըկողմերըչէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը , քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք

ամսից ավելի , ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունիլուծել պայմանգիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուսկողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրը ուժիմեջ մտնումկողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է , որ գնման գործընթացում մինչև պայմանգրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/, կամ Վաճառողին հաղթող ճանաչելու / ընտրելու / մասին որոշումըչի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետոթյան օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմագիրը չկնքելու համար: Ընդ որում Գնորդը չիկրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտիռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իրմեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որըչի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմագիր կնքելումիջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվելկողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվելկողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ կետ

1/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի, ընդ որում՝ պայմանագրի կողմերին պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումըկարալու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում:

2/ Սույն պայմանգրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան 20 տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գներըորոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է հետյալ կերպ

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________

կարգը սահմանվում է պայմագրով նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ ,որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների ձեռքբերվող գնման առարկաների միավոր գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում ՝ պայմանով , որ Գնորդի մոտ չի վերացել գնման առակայի օգտագործման պահանջը:

9.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի /Վաճառող և /կամ/ Գնորդ/ օգուտները /խնայողություներ/ և /կամ/ կրած վնասները տվյալ կողմիօգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերըլուվում են բանակցությունների միջոցով: համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերըլուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է __5__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնքունեն հավասարազոր իրավաբանական ուժ:սույն պայմանագրի NN 1,2,3 և 4 հավելվածները բաղկացած ___ թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմինտրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմաբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| | |
|---|---|
| Գնորդ | ՎԱՃԱՌՈՂ |

ՀՀ Շիրակի մարզի Պեմզաշենի Ն/Դ ուսումնական հաստատություն

Բանկ- << ԱՇԻԲ>>

Հ/Հ 900202224029

ՀՎՀՀ 06107385

Պեմզաշենի Ն/Դ հիմնարկի տնօրեն Մ Ամիրաղյան

Կ. Տ

Կ. Տ